ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի մայիսի 7-ից 8-ը Տաջիկստանի Հանրապետություն (Դուշանբե) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Գործուղվողը

Հրայր Հարությունյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության ներդրումային ծրագրերի համակարգման բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի 2024 թվականի ապրիլի 30-ի թիվ 886-Ա հրամանի համաձայն՝ 2024 թվականի մայիսի 6-ից 10-ը գործուղվել եմ Տաջիկստանի Հանրապետության մայրաքաղաք Դուշանբե:

4. Հրավիրող կողմը

Ասիական զարգացման բանկ (այսուհետ՝ ԱԶԲ)

5. Գործուղման նպատակը

Մասնակցել եմ «Տարածաշրջանային խորհրդակցություն բնապահպանական և սոցիալական շրջանակի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ, Կենտրոնական-Արևմտյան Ասիայի տարածաշրջանի պետական շահագրգիռ կառույցների համար» խորագրով միջոցառմանը:

6. Քննարկված թեմաները

Քննարկվել է Նախագիծը, որը բաղկացած էր չորս մասից՝ **Տեսլական, Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն, 10 Բնապահպանական և սոցիալական ստանդարտներ**՝ այդ թվում՝ 1) Բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների գնահատում և կառավարում, 2) Աշխատանքային

հարաբերություններ և աշխատանքային պայմաններ, 3) Աղտոտվածության կանխարգելում և ռեսուրսների արդյունավետություն, 4) Առողջություն, աշխատանքի պաշտպանություն և անվտանգություն, 5) Հողի օտարման և հողօգտագործման սահմանափակում, 6) Կենսաբազմազանություն և բնական պաշարների կայուն կառավարում, 7) Բնիկ ժողովուրդներ, 8) Մշակութային ժառանգություն, 9) Կլիմայի փոփոխություն, 10) Փոխգործակցություն շահագրգիռ կողմերի հետ և տեղեկատվության բացահայտում և **Արգելված ներդրումային գործունեության թարմացված ցանկը** ԱԶԲ-ի աջակցությամբ իրականացվող ներդրումային ծրագրերի ուղեցույցերում: Ինչպես նաև ուսումնասիրվել և քննարկվել են Նախագծի վերաբերյալ տարբեր երկրների ներկայացված դիրքորոշումները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Տեղի են ունեցել հանդիպումներ և քննարկումներ ԱԶԲ-ի ներկայացուցչների, խորհրդատուների, Վրաստանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Ադրբեջանի, Պակիստանի համապատասխան նախարարությունների ներկայացուցիչների, ոլորտի միջազգային փորձագետների հետ: Հանդիպումների և քննարկումների ընթացքում ներկայացվել է յուրաքանչյուր կողմի փորձը Նախագծի դրույթների և ներկայացվող ստանդարտների ուղղությամբ, մատնանշվել են հետագա գործողությունները Նախագծի կատարելագործման ուղղությամբ:

8. Ստորագրությունը, ամսաթիվը

14/05/2024թ.